



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

21.06.2021թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Միբելի՝ գորակոչիկներ,

Մեկնարկում է 2021 թվականի ամառային գորակոչը:

Տղե՛րք,

Բնականաբար, անցյալ տարի թշնամու կողմից սանձազերծված պատերազմից հետո այս գորակոչը չէր կարող չտարբերվել նախորդներից, բայց վստահ եմ, որ յուրաքանչյուրդ Հայոց Բանակի շարքերը համալրելու եք մեկ կարևոր գիտակցումով՝ հայրենասիրությամբ ու հայ տղամարդուն վայել արժանապատվությամբ:

Այսօրվանից դուք փոխարինում եք ձեր ավագ ընկերներին, որոնք անցել են պատերազմի արհավիրքի միջով, այսօրվանից դուք եք ստանձնում մեր սահմանների պաշտպանությունն ու անվտանգությունը:

Համոզված եղեք, որ մեր պետությունը նաև ձեր հայրենասիրության շնորհիվ արագ ուղղելու է մեջքը և ձեզ ու մեզ բոլորիս ՀԶՈՐ հայրենիքում ապրելու, հայրենիքը շենացնելու հնարավորություն է տալու:

Եղբայրնե՛ր,

Ոչ մի իրավիճակում չկորցնեք զգոնությունը, աչալրջությունը, եղեք միմյանց նկատմամբ հոգատար՝ փորձությունները հաղթահարելով միասնական, ուս ուսի տված՝ որպես ՀԱՅՐԵՆԻՔԻ անվտանգության ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐ:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ամառային գորակոչի մեկնարկի առթիվ՝ մեր գորակոչիկներին, սպաներին մաղթելով ուժ, կորով, անփորձանք ու խաղաղ ծառայություն, իսկ մեր գորակոչիկների ծնողներին, ընկերներին ու հարազատներին՝ հպարտության զգացումի հետ միախառնված համբերություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ